



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 133-Ս

ք. Երևան

«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2020 թվականի սեպտեմբերի 04-ին հարուցված թիվ 8 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

2020 թվականի սեպտեմբերի 04-ին Հանձնաժողով մուտքագրված «ՍՈՒԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիմումում նշված է «ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից հեղինակային իրավունքի խախտում կատարելու փաստի վերաբերյալ:

Ըստ դիմումատուի՝ Հեռարձակողի կողմից հեղինակային իրավունքի խախտումը հետևյալն է.

Հեռարձակողի կողմից առանց նախապես իրավատիրոջ թույլտվության ձեռքբերման ցուցադրվել են սույն թվականի օգոստոսի 23-ին «THE KING'S SPEECH» ("КОРОЛЬ ГОВОРИТ" 1x118 ԱՄՆ, Անգլիա 2010թ.) և օգոստոսի 27-ին «MATCH POINT» ("МАТЧ ПОИHT" 1x124 Անգլիա, Ավստրիա/Կա 2005թ.) ֆիլմերը, որոնց ցուցադրման բացառիկ իրավունքը Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է Ընկերությանը և Ընկերությունն էլ կրում է պայմանագրային պարտավորություն իրավատիրոջ հանդեպ՝ իրավունքները երրորդ անձանց խախտումներից պաշտպանելու ուղղությամբ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Ընկերության դիմումը՝ 2020 թվականի սեպտեմբերի 04-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը Հանձնաժողով գրավոր բացատրություն չի ներկայացրել:

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը դիմել է Ընկերությանը՝ դիմումում նշված ֆիլմերի ցուցադրման բացառիկ իրավունքը հավաստող իրավական հիմքերի առկայության փաստը պարզելու համար, որին ի պատասխան Ընկերությունը Հանձնաժողով է ներկայացրել հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող վերը նշված ֆիլմերի իրավատիրոջ հետ 27.11.2019թ-ին կնքված լիցենզիոն պայմանագիրը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Ընկերության կողմից ներկայացված փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի կողմից իրականացված դիտարկման արդյունքների հետ և արդյունքում հայտնի է դարձել, որ «THE KING'S SPEECH» ("КОРОЛЬ ГОВОРИТ" 1x118 ԱՄՆ, Անգլիա 2010թ.) և «MATCH POINT» ("МАТЧ ПОИИТ" 1x124 Անգլիա, Ավստրիալիա 2005թ.) ֆիլմերի ցուցադրման բացառիկ իրավունքը Հայաստանի Հանրապետության տարածքում վերապահված է Ընկերությանը, իսկ Հեռարձակողի կողմից առանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության սույն թվականի օգոստոսի 23-ին և օգոստոսի 27-ին ցուցադրվել են վերը նշված ֆիլմերը:

Նշված արարքը համապատասխանում է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներին:

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գույքային իրավունքներն ապահովում են հեղինակի նյութական շահերը՝ տալով հեղինակին բացառիկ իրավունք՝ թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության կամ դրա օրինակների օգտագործումը:

Հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձևով և եղանակով, ինչպես նաև երրորդ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հեղինակային բացառիկ պայմանագրով իրավատերն

օգտագործողին է փոխանցում ստեղծագործությունը որոշակի ժամկետում ու պայմանագրով նախատեսված սահմաններում օգտագործելու բացառիկ իրավունքը՝ պահպանելով ստեղծագործության օգտագործման իրավունքն այն մասով, որը նախատեսված է պայմանագրով: Այս դեպքում այլ անձանց կողմից ստեղծագործության օգտագործումն արգելելու իրավունքը կարող է իրականացնել իրավատերը, եթե դա չի կատարում օգտագործողը:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:

Այսպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում, իսկ Հեռարձակողի կողմից ցուցադրվել է հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող ֆիլմեր, որոնց հեռարձակման իրավունքը չի ունեցել, ավելին, վարչական վարույթի ընթացքում որևէ բացատրություն այս հարցի կապակցությամբ, ինչպես նաև ֆիլմերի հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթուղթ չի ներկայացվել Հանձնաժողով: Հեռարձակողի կողմից իրականացվել է ոչ սեփական տեսալսողական հաղորդումների հեռարձակում՝ առանց դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության՝ դրանով իսկ խախտելով «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենսդրությունը:

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է. «1. Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագրման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագրման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:»

Իսկ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝

պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար
նոջամիտ ժամկետ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 2-
րդ հոդվածի 1-ին մասը, 10-րդ հոդվածի 3-րդ մասը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և
56-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ԴԱԲ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել
վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում՝ խախտումները հետագայում վերացնելու
հանձնարարությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԴԱԲ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ
մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

19 հոկտեմբերի 2020թ.
ք. Երևան